



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇՈՒՄ

15 մարտի 2019 թ.

N 170-Ա

ք. Ստեփանակերտ

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N 1135-Ն որոշման 15-րդ կետի 1-ին ենթակետը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ղ ո շ ու մ է.**

Հաստատել էկոլոգիական կրթության և դաստիարակության միջոցառումների 2019 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:



«Հաստատում»
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵՆԻՍՏԻՏՈՒՄ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



Հավելված
Արցախի Հանրապետության
կառավարության 2019 թվականի
մարտի 15-ի N 170-Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ

1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Շրջակա միջավայրի հանդեպ սպառողական վերաբերմունքը, գլոբալ էկոլոգիական հիմնախնդիրների կլիմայի փոփոխության, հողերի դեգրադացման և անապատացման շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ մակերեսային ընկալումն էկոլոգիական գիտելիքների և մշակույթի ցածր մակարդակի հետևանք են: Հետևաբար՝ նոր էկոլոգիական մտածելակերպի ձևավորումը, հիմնված բնության և հասարակության համատեղ զարգացման սկզբունքների վրա, անհնար է առանց համընդհանուր էկոլոգիական կրթության և դաստիարակության:

Էկոլոգիական մշակույթը շրջակա միջավայրի հետ մարդկության կենսագործունեության ժառանգած փորձն է, որը նպաստում է առողջ կենսակերպին, երկրի կայուն սոցիալ-տնտեսական զարգացմանը, կյանքի որակի բարելավմանն ու էկոլոգիական անվտանգությանը: Հասարակության էկոլոգիական մշակույթի ձևավորումը պետության գերակա ուղղություններից է:

Արցախի Հանրապետությունում անհրաժեշտ է կարևորել էկոլոգիական կրթության և դաստիարակության ռազմավարական նշանակությունը՝ բնակչության էկոլոգիական անվտանգության և անվտանգ տնտեսության զարգացման խնդրում, որպես ազգային անվտանգության կարևոր բաղադրիչի ապահովումը մարդու և բնության փոխհարաբերություններում:

Էկոլոգիական կրթության և դաստիարակության միջոցառումների 2019 թվականի ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր) նախատեսվում է իրականացնել էկոլոգիական միջոցառումներ՝ Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության աշխատակիցների միջոցով:

II. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է Արցախի Հանրապետությունում էկոլոգիական կրթության, դաստիարակության և իրազեկման բնագավառում պետության և հասարակության կառույցների միջև ներդաշնակ համագործակցության ընդլայնումն՝ ուղղված էկոլոգիական կրթության որակի բարելավմանը, հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, հասարակության էկոլոգիական գիտակցության ձևավորմանը, որը կապահովի անհատների և հասարակության գործունեության բոլոր ձևերում պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի հանդեպ:

Ծրագրի խնդիրներն են.

- 1) կրթական համակարգի տարբեր մակարդակներում էկոլոգիական կրթության և դաստիարակության տեսական և գործնական միջոցառումների կազմակերպումը.
- 2) կրթական համակարգի տարբեր մակարդակներում էկոլոգիական անընդմեջ կրթության և դաստիարակության գործընթացի շարունակականության ու կապի ապահովումը.

3) հասարակության տարբեր խմբերում էկոլոգիական գիտակցության ու աշխարհայացքի և մարդ-հասարակություն-տեխնոլոգիաներ-ընություն համակարգում համարժեք էկոլոգիական պատկերացումների ձևավորումը.

4) էկոլոգիական կրթության և դաստիարակության առկա վիճակի վերլուծությունը.

5) կրթական համակարգի տարբեր մակարդակներում էկոլոգիական կրթության կազմակերպման, պետական միասնական ծրագրերի մշակման համար բավարար տեսական հիմքի նախապատրաստումը:

III. ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել՝

1) համայնքներում բնապահպանական թեմաներով հանրային իրազեկման միջոցառումներ.

2) բնապահպանական արշավներ դեպի բնության հատուկ պահպանվող տարածքներ.

3) միջազգային բնապահպանական օրերին նվիրված բնապահպանական հարցերի շուրջ կլոր սեղաններ.

4) նախադպրոցական համակարգի երեխաների մասնակցությամբ բնապահպանական միջոցառումներ.

5) միջնակարգ կրթական համակարգում բնապահպանական ուղղվածությամբ թեմատիկ մրցույթներ, միջոցառումներ.

6) բնապահպանական տեղեկատվության տարածում՝ տեղեկատվական նյութերի պատրաստում ու տպագրում:

IV. ԱՎՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ծրագրի արդյունքում հասարակության շրջանում կմեծանա էկոլոգիական տեղեկատվությունից օգտվելու հնարավորությունները, կբարձրանա հանրության հետաքրքրվածությունը շրջակա միջավայրի պահպանության նկատմամբ, կընդլայնվեն բնապահպանական խնդիրների վերաբերյալ հանրային իրազեկման միջոցները:

V. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ծրագրի իրականացման համար «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Արցախի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի 05 բաժնի 6 խմբի 1 դասի «06. էկոլոգիական կրթության և դաստիարակության միջոցառումների ծրագիր» ծրագրով նախատեսվել է 1 497 000 (մեկ միլիոն չորս հարյուր ինսուսույոթ հազար) ՀՀ դրամ:

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ



Ա. ԼԱԶԱՐՅԱՆ